



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 հունիսի 2019 թվականի թիվ 56-Ա
ք. Երևան

«ԱՐԱՆԵԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՄԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի մայիսի 24-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Բավարարել «ԱՐԱՆԵԱ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ կինո» «Դոմ կինո Պրեմիում» «Վրեմյա. Դալոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Սուզիկա Պերվոգո» «Օ!» «Զագորոդնայա ժիզն» «ԷյչԴի Լայֆ» «Մատչ! Պլանետա» «Մատչ! Պրեմիեր» «Կինոպրեմիերա» «Կինոխիտ» «Կինոսվիդանիե» «Կինոսեմյա» «Սուժսկոյե Կինո» «Նաշե Նովոյե Կինո» «Ռոդնոյե Կինո» «Կինոմիկս» «Նոստալգիա ՏՎ» «Կտո Եստ Կտո» «Մ1 Գլոբալ» «Բոկս ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կինոսերիա» «Կուխնյա ՏՎ» «365 Դնեյ ՏՎ» «Ավտո Պլուս» «Լյա-Մինոր ՏՎ» «Ժիվի!» «ԿՎՆ ՏՎ» «Զի ՏՎ»	31.12.2019թ.